ԿԱՆԹԵՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Թեմա-օրվա դասի պլան

Կազմող-Լուսինե Սուլյան

Խումբ- հայոց լեզու,գրականություն

Ղեկավար-Սուսան Սարուխանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

էջ 1

Դասի պլանավորում

էջ 2

Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև

էջ 3

Թեմայի պլանավորում

էջ 6

Թեմայի նպատակները

էջ 7

Դասի պլան

էջ 12

Կրթության բովանդակության ձևավորման հիմունքները

էջ 18

Ամենակարևոր հարցերը,որոնք պիտի պատասխանի ուսուցիչը դասը պլանավորելիս

էջ 19

Դասի պլանավորում

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայմն է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն և բազմակիորեն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը մոդելավորելը; Թեմայի ընտրությունից հետո դասի պլանավորումը կարելի է տրոհել հետևյալ հաջորդական քայլերի՝

- *1-ին քայլը* դասի նպատակի հստակ գիտակցելն է.ու՞ր ենք ուզում հասնել,ի՞նչ ուղիով,ի՞նչ միջոցներով:Նպատակի և դրանից բխող խնդիրների ձևակերպման հարցում ուսուցիչը պետք է օգտվի առարկայական չափորոշային պահանջներից և ուսումնական ծրագրի <<Թեմայի ուսումնասիրությունը սովորողին հնարավորություն է տալիս >> բաժնից:Ձևակերպված խնդիրների իրականցումից հետո աշակերտի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները պետք է բավարարեն առարկայական չափորոշիչի պահանջներին:Բացի այս նորմատիվային պահանջներից,ուսուցիչը պետք է տեսնի նաև տվյալ դասի իրատեսական հնարավորությունները,կիրառելիությունն ու իր մեջ պարունակող դաստիարակչական տարրերը նաև միջառարկայական կապի տարրերը:

- *2-րդ քայլը* սովորողների նախագիտելիքների ախտորոշումն է:Սա շատ կարևոր է,քանի որ ամեն մի մատուցվող նյութը հիմնվում է նախկինում ստացված գիտելիքների ու կարողությունների վրա և պիտի համապատասխանի տվյալ դասարանի ընդհանուր մակարդակին:Ախտորոշումն իրականցվում է նախորդ դասերի ընթացքում դիտման մեթոդի կամ հարց ու պատասսխանի միջոցով:Եվ անհրաժեշտության դեպքում նախորդ դասին իսկ կարելի է հիմքեր դնել տվյալ դասի

համար:

- *3-րդ քայլը* ուսուցչի կողմից ակնկալիքների ու սպասումների ճշտգրտումն է,ինչպես ընդհանուր դասրանից,առանձին խմբերից,այնպես էլ ամեն մի աշակերտից;
- *4-րդ քայլը* դասի խնդիրներից ելնելով համապատասխան մեթոդի ընտրությունն է:
- *5-րդ քայլը* դասասենյակի համապատասխանեցումն է տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին:Ուսուցիչը պետք է դասավորի բոլոր այն նյութերը,որոնք օգտագործվելու են տվյալ դասին,այդ թվում նաև ուսումնական նյութերը,համոզվի,արդյոք սարքին են անհրաժեշտ տեխնիկական միջոցները և ցանցային սարքավորումները,բավարար է ծրագրային ապահովումը:
- *6-րդ քայլը* գնահատման ձևի ընտրություն,չափանիշների ճշտգրտումն ու մշակումն է:
- *7-րդ քայլը* ժամանակի բաշխումը՝ ըստ փուլերի:

Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի,կնպաստի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինումը:Առաջարկվող հարցերի պատասխանները,կօգնեն ուսուցչին ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը:

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել,որ աշակերտները պատրաստ են կատարել վարժությունը կամ քննարկել նյութը:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ առաջադրանքը:
- Որքանո՞վ եմ իմ ակնկալիքները իրատեսական ժամանակի առումով;
- Ինչպե՞ս գնահատել աշակերտների ձեռք բերած գիտելիքները և հմտությունները:
- Ի՞նչ եմ ուզում,որ աշակերտները զգան/ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել/:

Դասի նախապատրաստվելուց հետո գալիս է այդ դասի իրականացումը,որը պարունակում է հետևյալ քայլերը՝

- *1-ին քայլը* կազմակերպչական աշխատանք,ներկա,բացակա և այլն:
- *2-րդ քայլը* անդրադարձ նախորդ դասին,հարց ու պատասխան և նոր թեմայի համար աշակերտների հետաքրքրության *խթանում:* Ուսուցման գործընթացի

խթանման փուլը աշակերտներին հնարավորություն է տալիս խորհել նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ:

Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև

Դասի համար առանձնացնում ենք մի շարք էական կողմեր.

-Պրապմունքներն սկսվում են ուսումնական ուսումնական տարվա սկզբին (սեպտեմբերի 1) և ավարտվում ուսումնական տարվա վերջում (մայիս -հունիս);

-Պարապմունքները տարվում են աշակերտական հաստատուն համակազմի հետ,որը որոշ բացառորթյուններով պահպանվում է մինչև ուսումնառության ավարտելը:

-Դասարանի կազմավորումը կատարվում է աշակերտների տարիքային և իրական ուսումնական հնարավորությունները հաշվի առնելով:

-Բոլոր դասարաններում պարապմունքներն անց են կացվում համաձայն նախապես կազմված դասատախտակի,ուսումնական պլանի և ծրագրերի:

-Դասի ղեկավարը ուսուցիչն է,որը գլխավորվում է դասի ընթացքում աշակերտների կողմից կատարվող բոլոր աշխատանքները:

Դասին ներկայացվող մանկավարժական պահանջները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի. *կրթական* կամ *դիդակտիկական,դաստիարակչական* և *զարգացնող:*

Կրթական կամ *դիդակտիկական* պահանջներն իրականացնելու համար ուսուցիչը նախապես որոշում է նրա հիմնական խնդիրները,զատում գլխավորներն ու երկրորդականը:Ուսումնական ծրագրին համապատասխան որոշում է դասի բովանդակությունը:Որպեսզի իրականացնի կրթական պահանջները,նա դասից առաջ ընտրում է ուսուցման արդյունավետ մեթոդները և հնարները:Դասի յուրաքանչյուր փուլում խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը,իրար է զուգակցում նրանց կոլեկտիվ և ինքուրույն աշխատանքի ձևերը,ձգտվում է կառավարել ուսուցման ընդունված սկզբունքներով ,հաշվի է առնում մանկավարժական,հոգեբանկան պայմանները:Իրագործում է միջառարկայական կապերը:

Դասի *դաստիարակչական* պահանջները իրականացնելու համար ուսուցիչը յուրաքանչյուր դասի անպայման դնում է դաստիարակչական բնույթի խնդիրներ և փորձում է լուծել դրանկք:Այդպիսիք կարող են լինել գաղափարական,բարոյական,գեղագիտական և այլ փնդիրներ:Սովորողների ձեռք բռրած գիտելիքների հիման վրա ձևավորվում է նրանց աշխարհայացքը,նրանց մեջ դաստիարակվում է հայրենասիրություն,մարդասիրություն,բարոյական հատկանիշներ,գեղագիտական կուլտուրա և ճաշակ:

Դասի *զարգացնող* պահանջներն իրականացնելու համար ուսուցիչը խթանող,մոտիվացիոն,որոնողական մեթոդների ու հնարների գործադրմամբ թորձում է ձևավորել սովորողների ճանաչողական հետաքրքությունները:Ուսումնասիրում է նրանց մտածողության տեսակները,հիշողությունը,մտապահումը,ուշադրությունը,երևակայությունը և այլն:

Կարևոր հանգամանք է դասի լավագույն կազմակերպումն ու իրականացումը:Այն սկսվում է կազմված պլանից,պետք է լինի հստակ,օգտագործվի յուրաքանչյուր բոպեն,դասի փուլերը լինեն որոշակի:Իրականացվի դասին ներկայացվող կրթադաստիարակչական և զարգացնող պահանջները:

Դասերի կառուցվածքը ըստ դասերի տիպերի բազմազան է:Յուրաքանչյուր տիպի դաս պահանջում է իր յուրահատուկ պլանավորումը ր ինքնատիպ սխեման;

Դասի կառուցվծքը պայմանավորված է.

1.դիդակտիկ նպատակներով

2.ուսումնական նյութի բովանդակությամբ

3.գործադրվող ուսումնական մեթոդներով և հնարներով

4.սովորողների պատրաստության մակարդակով

5.ուսուցչի ստեղծագործական որակներով ու աշխատանքի բնույթով

6.դասարանի առանձնահատկություններով և այլ խնդիրներով

Դպրոցներում տարածված է համակցված դասի կառուցվածքը,որը կազմված է հետևյալ մասերից.

- կազմակերպչական մաս,երբ ուսուցիչը ստուգում է սովորողների տնային առաջադրանքները,ամփոփում արդյունքները
- հարցում,երբ հարցնում է ուսումնասիրված ուսումնական նյութը
- ամփոփում հարցերի միջոցով
- նոր նյութի հաղորդում
- նյութի ամրակցում և տնային առաջադրանքների հանձնարարում

Այդուհանդերձ առաջավոր մանկավարժական փորձը ապացուցում է,որ դասի ավանդական կառուցվածքը չի համապատասխանում ժամանկակից դիդակտիկայի պահանջներին:Դիդակտիկայի արդի խնդիրներից է դասի կառուցվածքի տեսության

մշակումը:

Ուսուցչի նախապատրաստումը դասին բաժանվում է երկու փուլի.*նախապատրաստման* և *իրագործման*:Առաջին փուլում ուսուցիչը ծանոթանում է ուսումնական ծրագրերին,ձեռնարկներին,դասագրքերին:Մանրամասն ուսումնասիրում է դրանց պահանջները,ժամանակակից մանկավարժական և հոգեբանական գրականությունը,առաջավոր ուսուցիչների փորձը,ապա ըստ դասարանների որոշում դասի տեղը թեմատիկ պլանում:Ելնելով վերջինից ուսուցիչը կազմում է օրացուցային պլան,ուսումնական ծրագրային նյութը բաշխում է կիսամյակի,ուսումնական քառորդների,շաբաթների վրա,նշում դրանց իրացման ժամկետները;Երբ սկսվում է ուսումնական տարին,ուսուցիչը յուրաքանչյուր դասի համար կազմում է օրվա դասի պլանը,այլ կերպ սկսվում է իրագործման փուլը:Այս փուլում կարևոր նշանակություն ունի ուսուցչի կողմից նոր նյութի հաղորդումը,որը սկսվում է հասկացության ձևավորումով,նրա իմաստի բացահայտումով,այնուհետև վերլուծաբար հաղորդվում է ուսումնական նյութի բովանադակությունը;Հաղորդման ընթացքում ուսուցչին առաջնորդվում է ուսուցման սկզբունքերով,գործադրում է համապատասխան մեթոդներ և հնարներ:Իրագործման փուլում մեծ է նաև ամրապնդման նշանակությունը,որի գլխավոր նպատակն է սովորողներին ավելի խոր յուրացնել տալ նոր նյութի շարադրանքի բովանադակությունը:

Դասերի ընթացքում սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպվում և իրագործվում է երեք ձևով.*համընդհանուր* կամ *ֆրոնտալ,անհատական* և *խմբային:*

Ֆրոնտալ ձևը ենթադրում է դասի կրթադաստիարակված և զարգացնող խնդիրների համտեղ լուծում,որը կիրառվում է հարց-առաջադրանքների ձևով:Այս ձևը դրական կողմերով հանդերձ ունի թերություններ,որովհետև այն թույլ չի տալիս դասարանի յուրաքանչյուր աշակերտի արրտահայտել իր ճանարչողական հետքրքրությունները և կարողությունները:

Անհատական ձևը ենթադրում է աշակերտների առավել ինքնուրույնություն և հնարավորություն է ստեղծում վերահսկել ու կառավարել յորաքանչյուր աշակերտի առաջադիմությունը:Սրա թերությունը կայանում է նրանում,որ աշակերտը մեկուսանում է և նրա համար բացառվում են կոլեկտիվ քննարկումները:

Խմբային ուսուցումը հիմնականում արդյունավետ է գործնական առաջադրանքներ կատարելիս,վարժություններ լուծելիս և այլն:Այս դեպքում դասարանը բաժանվում է խմբերի (4-6 հոգի),որոնք այդ ձևաչափով էլ կատարում են հանձնարարությունները:

Թեմայի պլանավորում

Թեմա՝

Դերանուն (15 ժամ)

Թեմայի նպատակները

- Ծանոթացնել դերանուն խոսքի մասին:
- Ձևավորել գիտելիք դերանվան և նրա տեսակների վերաբերյալ:
- Ներկայացնել դերանվան քրականական հատկանիշները:
- Ծանոթացնել դերանվանկան հոլովման առանձնահատկություններին:
- Ներկայացնել նախադասության մեջ դերանունների դերը:
- Ներկայացնել ուղղակի և անուղղակի խոսքում անձնական դերանվան կիրառման յուրահատկությունները;
- Ձևավորել գիտելիք հայերենի հոդերի տեսակների վերաբերյալ:
- Զարգացնել գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունները դերանունների կիրառմամբ:
- Նպաստել հարգալից խոսքի կիրառմանը՝ անձնական դերանունների 2-րդ դեմքի հոգնակիի գործածությամբ:
- Խթանել սոցալական հարաբերությունները՝ վարելով հարցազրույցներ,բանավեճեր:

Թեմայի վերջնարդյունքները

Աշակերտը կկարողանա՝

-տարբերել դերանվան տեսակները

-ձևափոխել և կիրառել դերանվան տարբեր տեսակները ըստ անհրաժեշտության

-կիրառել դերանունների հոմանիշ և հականիշ զույգերը գրավոր և բանավոր խոսքում

-մեկնաբանել խոսքում դերանվան կիրառման անհրաժեշտությունը և իմաստային արժեքը

-համեմատել դերանունների խոսքիմաստային պատկանելություն ցույց տվող տեսակները

-կառուցել խոսք՝ դերանվան տարբեր տեսակների և հոդերի և հոդերի ճիշտ կիրառությամբ

-փոխարինել հոդերը դերանուններով և հակառակը

-փոխոխել և ստեղծել տեքստեր՝ կիրառելով դերանուններ

-գնահատել դերանունների դերը խոսքում՝ հիմնավորելով տրված տեքստում հանդիպած դերանուններով

-վարել հարցազրույցներ,մասնակցել բանավեճերին

Դասապլան

Ամսաթիվ՝

Առարկա՝

Դասարան՝

Աշակերտների թիվը՝

Դասի տևողությունը՝

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի թեմա՝

Դասի նպատակը՝ 1.ծանոթացնել փոխադարձ դերանուններին

2.ներկայացնել փոխադարձ դերանվան քերականական հատկանիշները

3.խթանել փոխադարձ դերանվան դերի ընկալումը

նախադասության մեջ

4.զարգացնել սովորողների ճանաչողական ստեղծագործական կարողությունները

Դասի վերջնարդյունքները՝ Աշակերտը կկարողանկա՝

1.ճանաչել փոխադարձ դերանունները

2.նշել փոխադարձ դերանունների քերականական հատկանիշները

3.ձևափոխել փոխադարձ դերանունները

4.կազմել նախադասություններ փոխադարձ դերանուններով

Միջառարկայական կապեր՝ Կապեր ստեղծել,համեմատական զուգահեռներ տանել ***օտար լեզուներում*** գործածվող փոխադարձ դերանունների,դրանց քերականական հատկանիշների հետ;

Խաչվող հասկացուցյություններ՝ Կայունություն և փոփոխություն

Ուսուցման մեթոդներ՝ Մտքերի տարափ,ժամացույցի ընկերներ,ԾՀԲՍ մեթոդ,Ելքի տոմս,Quizzis առցանց գործիք

Դասի սկիզբ՝ Դասը պլավորած է այնպես,որ աշակերտները աշխատելու են զույգերով,ուստի դասի սկզբում,կիրառելով <<Ժամացույցի ընկերներ>> մեթոդը,ձևավորել զույգեր:

Դասն սկսել՝ կիրառելով <<Մտքերի տարափ>> մեթոդը:Հանձնարարել,որ յուրաքանչյուր աշակերտ իր տետրում

1րոպեի ընթացքում գրի առնի իր իմացած բոլոր

դերանունները:

Ավարտելուց հետո զույգերը փոխանակում են իրենց տետրերը և դասընկերոջ տետրում գրի առած դերանունների դիմաց նրանցից յուրաքանչյուրը գրում է դերանվան տեսակը:Տրվում է ևս 1րոպե:

Ավարտում են,հետ են վերադարձնում տետրերը և ստուգում են,թե արդյոք ճիշտ է իր զույգը որոշել դերանվան տեսակը:Անհամաձայանության դեպքում քննարկում են իրար հետ:

Ուսուցիչը աշխատանքի ավարտից հետո հարցնում է,թե ով է գրի առել ամենամեծ քանակով դերանուններ,և նրան խնդրում է կարդալ այդ դերանունները:

Դասի ընթացք՝ Աշակերտները ծանոթանում են նոր նյութին ուսուցչի տրամադրած դասանյութերով:Այս անգամ ուսուցիչը կիրառում է ԾՀԲՍ մեթոդը (ծանոթանալ,հարցեր գրել,բացատրել,ստուգել):

10 րոպե

Ուսուցիչը հնարավորություն է տալիս,որ յուրաքանչյուր զույգ յուրաքանչյուր զույգ դասարանին ուղղի այն հարցերը,որ իրենք գրի են առել դասանյութին ծանոթանալիս:Եթե ճիշտ պատասխան չի

10րոպե

հնչում,ապա զույգը տալիս է իր հնչեցրած հարցի պատասխանը:

Ամեն զույգի ուսուցիչը տալիս է բանավոր հետադարձ կապ:

Ավարտելուց հետո ուսուցիչը սահիկաշարով ամփոփում է թեման:

3րոպե

Ուսուցիչը Quizzis առցանց գործիքի օգնությամբ կատարում է ուսումնառությանը նպաստող գնահատում:

7րոպե Գործիքը հնարավորություն է տալիս աշակերտներին նույն պահին տեսնելու,թե՞ ոչ:

Ավարտելուց հետո ուսուցիչը հետադարձ կապ է տալիս աշակերտներին:

Դասի ավարտ Դասի ավարտին ուսուցիչը կատարում է ամփոփում՝ կիրառելով **5րոպե** <<Ելքի քարտ>> մեթոդը:

Աշակերտները <<Ելքի քարտում>> լրացնում են բան 3բան,որ իրենք սովորեցին,2բան,որ այսօր իմացան,և 1բան,որ դեռ լիարժեք չեն հասկացել:

Տնային հանձնարարություն Դիտել 3րոպեանոց ֆիլմ այս հղումով,ստեղծել փոքրիկ պատմություն դիտած ֆիլմի շուրջ՝ կիրառելով արդեն անցած և այսօր սովորած դերանունները (20 դերանուն)

Գնահատում Ձևավորվող գնահատում,փոխադարձ գնահատում

Դասի պլան

Դաս 1.

Հայերենի զարգացման փուլերը՝ գրաբար,միջին հայերեն,աշխարհաբար՝ արևելահայ և արևմտահայ տարբերակներով:

Ուսուցիչ՝

Ամիս/ամսաթիվ՝

Դասարան՝ 10-րդ

Թեման՝ Հայերենի զարգացման փուլերը

Նպատակները՝

- Ձևավորել գիտելիք հայերենի զարգացման փուլերի մասին,
- նպաստել հայոց լեզվի զարգացման գործում գրաբարի դերի գիտակցմանը և արժևորմանը:

Կարողանա՝

- ներկայացնի հայերենի զարգացման փուլերը՝ նշելով դրանց որոշ առանձնահատկությունները,
- նշի՝ որ դարերում են ձևավորվել գրաբարը և միջին հայերենը,
- տարբերի և ներկայացնի աշխարհաբարի ճյուղերը,
- տարբերակի յուրաքանչյուր փուլի լեզվական առանձնահատկությունները,
- ապա ստեղծի գրաբարի և ժամանակակից հայերենի միջև,
- քննադատական վերաբերմունք արտահայտի,
- կատարի զուգորդումներ,համեմատություններ,
- ընդհանրացնի և եզրակացություններ կատարի:

Ուսումնական նյութերը՝ դասագիրք,թղթապաստառ,նշագրիչ,բառարաններ,A4 չափսի թղթեր,գրիչ,քարտեզ:

Ուսուցման մեթոդները՝ մտագրոհ,կարճ դասախոսություն,երկսյուն աղյուսակի աղյուսակի (T-աձև աղյուսակ) գծակարգ,վենների տրամագիր,5-բոպեանոց շարադրանք:

Տևողությունը՝ 1 դասաժամ

Դասի ընթացքը՝

<<Մտագրոհ>>-ի միջոցով վեր հանել սովորողների՝ գրաբարի մասին ունեցած նախնական գիտելիքները:Հնչեցրած բառերը լրացնում ենք սլաքների վրա:Երեխաներին առաջարկում ենք կազմել << գրաբար>> հիմնաբառով և գծակարգի շուրջն առաջացրած բառերով կազմել նախադասություն:Աշխատանքն ավարտելուց հետո ցանկացողները կարդում են:

Ուսուցիչը դասագրքի համապատասխան նյութը հանձնարարում է աշակերտներին կարդալ կամ ինքն է դասախոսության միջոցով տեղեկության միջոցով տեղեկություն հաղորդում թեմայի վերաբերյալ՝ ասելով,որ հայոց լոզվի պատմությունը երկու մեծ շրջանների է բաժանվում՝ նախագրային շրջան և գրային շրջան:Նախագրային շրջանն ընդրկում է հնդեվրոպական հիմք լեզվից անջատվելուց հետո մինչև 5-րդ դարի սկիզբն ընկած ժամանակը:Գրային կամ գրավոր շրջանն սկսվում է 405 թվականից,երբ Մեսրոպ Մաշտոցն ստեցծեց հայկական գիրը:

Հայոց լեզվի զարգացման գրային շրջանը երեք փուլ ունի՝ հին (5-11-րդ դարեր),միջին (12-16-րդ դարեր) և նոր (17-րդ դարից առ այսօր):

Հին կամ գրաբարի շրջան (5-11-րդ դարեր):Այս շրջանի գրական լեզուն գրաբարն է:Այն հայտնի է նաև հին հայերեն անունով;Այս շրջանն սկսվում է հայոց գրերի գյուտով:5-րդ դարում սկզբնավորվում է հայ ինքնուրույն գրականությունը:

Գրաբար են ստեղծագործել Մաշտոցի կենսագիր Կորյունը,պատմիչներ Ագաթանգեղոսը,Փավստոս Բուզանդը,Եղիշեն,Մովսես Խորենացին,Ղազար Փարպեցին և շատ ուրիշներ:

5-րդ դարում Հյաստանում Թարգմանչական հզոր շարժում է ծավալվում.թարգմանվում են Աստվածաշունչը,քերականական,փիլիսոփայական,աստվածաբանական,պատմագիտական,մաթեմատիկական և այլ աշխատություններ:Աստվածաշնչի թարգմանությունը հետագայում եվրոպացի գիտնականներից մեկն անվանել է <<թարմանությունների թագուհի>>:Հայերենը մշակվում,հղկվում է,հստակորեն կանոնավորվում:Այն ժամանակի հարուստ և ճոխ լեզուներից էր;

Դարերի ընթացքում,սակայն,խոսակցական լեզուն էապես փոփոխվում է և սկսում տարբերվել գրական լեզվից:Գրական լեզուն դառնում է գերազանցապես գրքի,գրավոր

խոսքի լեզու:Ավելի ուշ հանդես է գալիս գրաբար անունը,որ հենց այդ էլ նշաբնակում է՝ <<գրայիօն,գրորեն>>,այսինքն՝ <<գրքի լեզու>>:Գրաբարը հարյուրամյակներ շարունակ գեղարվեստական և գիտական գրականության,ինչպես և դպրոցական ուսուցման լեզու էր:Մինչև 19-րդ դար նրա դիրքերը դեռևս ամուր էին:

Այսօր գրաբարը Հայ առաքելական եկեղեցու ծիսական արարողությունների լեզուն է:Գրաբար դասավանդվում է Հայաստանի ուսումնական տարբեր հաստատություններում,խոսքերի և ասույթների այսօր էլ կարելի է հանդիպել գեղարվեստական և գիտական գրականության էջերում,լսել ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Առանց գրաբարի իմացությաբն լավ բանասեր,պատմաբան,հոգևորական հնարաբոր չէ դառնալ:

Միջին կամ միջին հայերենի շրջան (12-16-րդ դարեր):Այս շրջանում խոսակցական լեզվի հիման վրա հանդես է գալիս մի նոր գրական լեզու,որն ավելի ուշ կոչվեց միջին հայերեն:Այս անունն առաջացել է այն ժամանկան,երբ լեզվաբանության մեջ արդեն գոյություն ունեին հին հայերեն և նոր հայերեն տերմինները:Այս շրջանի գրավոր հուշարձանները հիմնկանում ստեղծվել են Կիլիկիայի հայկական թագավորությունոնում:Այդ պատճառով էլ միջին հայերենը կոչում են նաև կիլիկյան հայերեն:

Նոր կամ աշխարհաբարի շրջան (17-րդ դարից առ այսօր):Լեզվի նոր վիճակը բավական տարբեր էր թե' գրաբարից,և թե' միջին հայերենից:Գրավոր հաղորդակցության դժվարություններ էին առաջացել.հասկացված լինելու նպատակով մարդիկ գրում էին ժամանակի խոսակցական լեզվով:

Գրաբարն ընկալվում էր իբրև եկեղեցում գործածվող լեզու:Նոր շրջանի լեզուն կոչվեց աշխարհաբար,այսիքն՝ <<աշխարհիկ,աշխարհիկ լեզվով>>՝ ի հակադրություն <<եկեղեցու լեզվի>>՝ գրաբրի:

Հայ հասրակության մեջ սկսվեց պայքար գրաբարը գործածությունից դուրս մղելու և աշխարհաբարը միակ գրական լեզու դարձնելու նպատակով:Այդ պայքարը պատմության մեջ մտավ <<գրապայքար>> անունով:

Աշխարհաբարը հանդես եկավ երկու տարբերակով:Կիլիկյան թագավորության անկումից հետո (1375թ.) Հայաստանն ավելի քան հարյուր տարի դառնում է զանազան քոչվոր ցեղերի,իսկ 16-րդ դարից՝ Օսմանյան սուլթանության և Պարսկաստանի ռազմաբեմ:Հակամարտությունն ավարտվում է Հյաստանի բաժանումով (1555թ.) մեր հայրենիքի արևմտյան մասն ընկնում է Թուրքիայի,իսկ արևելյանը՝ Պրսկաստանի տիրապետության տակ:Հայաստանի վարչաքաղաքական բաժանումը հանգեցրեց հայ

ժողովրդի մտավոր և մշակութային կյանքի տարանջատման:Տևական ժամանակի ընթացքում խորացավ նաև լեզվական տարանջատումը:

Նոր ձևավորվող գրական արևելահայերենի հիմքն է դառնում Արարատյան բարբառը (Երևանի ու շրջակա վայրերի խոսվածքները),իսկ գրական արևմտահայերենինը՝ Պոլսի բարբառը:Այս բարբառներն ընկան աշխարհաբարի գրական տարբերակների հիմքում,քանի որ Արարատյան դաշտը (Երևան,Սուրբ Էջմիածին) և Պոլսի կարևոր նշանակություն ունեին հայ ժողովրդի երկու հատվածների տնտեսական,քաղաքական,մշակութային և հոգևոր կյանքում:Այս տեղ էին շփվում նաև տարբեր բարբառների և խոսվածքների ներկայացուցիչներ,այդ կենտրոնների խոսակցական լեզուները հաղորդակցման միջոց են դառնում այլ բարբառներով խոսողների համար:

Ռուսաստանի և Պարսկաստանի հայախոս վայրերում տարածված է արևելահայ,իսկ Թուրքիայի հայախոս վայրերում՝ արևմտահայ գրական տարբերակը:1915թ. ցեղասպանությունից հետո արևմտահայությունը ցրվեց աշխարհով մեկ,և արևմըահայերենը դարձավ սփյուռքահայության լեզուն՝ զրկվելով հայրենի հողի վրա հաղորդակցության միջոցով լինելու և լայնորեն կիրառվելու հնարավորությունից:

Գրական արևելահայերենը Հայաստանի Հանրապետությունում պետական լեզվի կարգավիճակ ունի:Այն կիրառվում է ամենուրեք՝ օրենսդիր,գործադիր և դատական մարմիններում,կրթության և գիտության ոլորտում,զանգվածային լրատվության միջոցներում,գիտության և գեղարվեստական գրականության մեջ:

Երբ ընթերցումը կամ դասախոսությունն ավարտվում է սովորածն ամրապնդելու նպատակով,դասարանը բաժանվում է 6խմբի և խմբից յուրաքանչյուրին տալիս ենք մեկ հարց՝ գրավոր պատասխանելու:

1-ին խումբ.

Ինչպիսի՞ շրջանների է բաժանվում հայոց լեզվի պատմությունը:

2-րդ խումբ.

Որո՞նք են հայոց լեզվի զարգացման գրային շրջանիի փուլերը և ժամանակային ինչպիսի՞ ընդգրկում ունեն:

3-րդ խումբ.

Համառոտ ներկայացրու հայոց լեզվի զարգացման փուլերը:

4-րդ խումբ.

Մեր օրերում որտե՞ղ է գործառվում գրաբարը:

5-րդ խումբ.

Հայ միջնադարյան մշակույթի և գիտության երևելի գործիչներից մեկի մասին զեկուցում պատրաստիր;

6-րդ խումբ.

Ներկայացրու աշխարհաբարի գրական տարբերակները:/7ոպե/

Հանձնարարությունները կատարելուց հետո խմբերը ներկայացնում են պատասխանները:Կատարվում է քննարկում և փոխանակում:

Քանի որ դասի սկզբից համապատասխան քարտեզը կախված է պատից կամ համացանցից ենք գտնում քարտեզներ,ապա ցույց ենք տալիս այն բնակավայրերը,որտեղ ապրել ու գրաբարով,միջին հայերենով ,արևելահայ կամ արևմտահայ լեզուներով են խոսել հայերը՝ սկսած անհիշելի ժամանակներից,մինչև մեր օրերը:

Որից հետո դասրանը բաժանում ենք երեք խմբի,առաջին խմբին հանձնարարում ենք թղթապաստառով ներկայացնել գրաբարի մասին ստացած գիտելիքներն ու տպավորությունները,երկրորդ խմբին՝ միջին հայերենի,իսկ երրորդ խմբին՝ աշխարհաբարի;

Աշխատանքներն ավարտելուց հետո,յուրաքանչյուր խումբ իր թղթապաստառը փակցնում է գրատախտակին և ներկայացնում:Կատարվում են լրացումներ:

Դասի ամփոփումը կատարում ենք՝ հանձնարարելով T-աձև աղյուսակով ներկայացնել գրաբարի և արդի հայերենի հնչյունական տարբերությունները:

Ավարտից հետո ներկայացնում են աշխատանքը և կատարում քննարկում:

Գրաբար	Արևելահայերեն

Անդրադարձ:/2րոպե/ Նշում ենք ձեռքբերումները և բացթողումները՝ հաջորդ դասին շտկում կատարելու ակնկալիքով:

Հանձնարարում ենք տնային աշխատանք:

Առաջադրանք՝

1.<<Գրքապայքարի>> մասնակիցների մասին փոքրիկ հաղորդում պատրաստի՛ր:

2.1920-րդ դարերի հայ նշանավոր գրողների ցանկ պատրաստիր և ներկայացրու,թե գրողներից յուրաքանչյուրը աշխարհաբարի ո՞ր տարբերակն է ստեղծագործել:

Կրթության բովանդակության ձևավորման հիմունքները

Դասի պլանի նմուշօրինակ

ԽԻԿ համակարգ

1.Ամիս,ամսաթիվ,ուսուցիչ

2.Առարկան,դասարանը

3.Դասի թեման

4.Դասի տիպը

5.Դասի նպատակները և խնդիրները

ա)Ակադեմիկական (գիտելիքներ) ա)ուսուցման արագ գնահատելի,չափելի արդյունքներ

բ)Կարողությունների և հմտությունների ձևավորում բ)ուսուցման հեռահար,հիմնական խնդիրներ

գ)Արժեքային համակարգի ձևավորում

6.Գնահատման չափանիշների սահմանում

7.Դասի փուլերի ներկայացման աղյուսակ

Դասի փուլերը	Ժամանակը	Ուսուցչի գործողութ յունները	Աշակերտի գործողությունները	Մեթոդներ, անհրաժեշտ նյութեր
Ներածություն, Մուտք, Մոտիվացիա, Խթանում, սկիզբ	5-7րոպե	Խթանում է, Հիշեցնում է, Հարցեր է տալիս	Պատասխանում է հարցերին, պատրաստվումէ աշխատանքի	Մտագրոհ, պրիզմա,ապագա անիվ,զարգացնո հարց,հետքրքիր փաստ
Հիմնական մաս,իմաստի ընկալման փուլ ընթացք	20-25րոպե	Հաղորդում է հիմնական Տեղեկատվութ Յունը,կազմա Կերպում է աշխատանքը	Աշակերտը լսում է, Տեղեկացվում է,աշխատում է	Խճանկար,շրջագ պատկերասրահ դասախոսությունն
Եզրահանգում կամ կշռադատման փուլ,ամփոփում	7-10րոպե	Շրջում է,ստուգում, Ճշտգրտում, աջակցում, ուղղորդում	Աշխատում է,կատարում առաջադրանքը, կշռադատում, եզրահանգումներ անում	Վենի դիագրամ, T-աձև այուսակ, M-աձև աղյուսա, համկարգող գծապատկեր
Անդրադարձ	ի՞նչ	ինչպե՞ս	ինչու՞	

Ամենակարևոր հարցերը,որոնց պիտի պատասխանի

ուսուցիչը դասը պլանավորելիս

1. Ի՞նչ պետք է կարողանան անել աշակերտները դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքների միջոցով:Ինչպե՞ս են այս առարկայական նպատակները առընչվում պետական չափորոշիչներին:

2. Ինչպե՞ս են բոլոր աշակերտները ցուցադրելու այն,ինչ գիտեն և կարող են անել:Ինչպիսի՞ն է լինելու գնահատման չափանիշը և ի՞նչ ձև է ընդունելու:

3. Ինչպե՞ս պետք է պարզեմ,թե աշակերտներն ինր գիտեն արդեն:Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց գնահատելու այն,ինչ գիտեն և զգացել են դասարանում կամ դասարանից դուրս:Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանցէ գիտելիքներ կառուցելու նախորդ գիտելիքների հիմքեվ,նաև անհրաժեշտության դեպքում՝ բացահայտելու,պարզելու չիմացածը:

4. Ինչպե՞ս են ներմուծվելու նոր գիտելիքները,գաղափարները և հմտությունները:Հաշվի

առնելով աշակերտների ունակությունների տարբերությունները՝ ո՞րն է լինելու նոր նյութը ներկայացնելու եղանակների ու միջոցների իմ լավագույն ընտրությունը:

5. Ինչպե՞ս կարող եմ աշակերտների համար ավելի դյուրին դարձնել նոր տեղեկատվության կամ գործողությունների մշակումը:Որո՞նք են հիմնական հարցերը,գործողությունները կամ հանձնարարությունները:

6. Ինչպե՞ս եմ դասի ընթացքում ստուգելու նյութի ընկալումը աշակերտների կողմից:

7. Ի՞նչ պետք է անել տարբերակված հրահանգավորում իրականացնելու նպատակով,որպեսզի ուսումնառության փորձառություններն արդյունավետ լինեն բոլոր աշակերտների համար:

8. Ինչպե՞ս եմ ես հնարավորություններ տալու աշակերտներին՝ իրական աշխարհի հետ կապեր ստեղծելու և կիրառելու մտածողության բազմազան և բարդ հմտությունները,որոնք անհրաժեշտ են դասարանում ր դասարանից դուրս հաջողության հասնելու համար:

9. Ի՞նչ է անհրաժեշտ անել ուսումնառության միջավայրում հարմարվելու և արդյունավետության հասնելու համար: